

տուէին իւրացնելու թէ՛ Ս. Յակոբի վանքը և թէ՛ Գողգոթայի Հայոց եկեղեցին. առաջնի մասին բոլորովին մերժուեցան. իսկ երկրորդի համար թէև անիրաւ, բայց ամէն ապօրէն միջոցները գործադրեցին: Երուսաղէմացի Յովհաննէս եպս., այլ անուամբ Հաննէ, իր Երուսաղէմի Պատմութեան մէջ ամփոփ կերպով կը պատմէ այս դէպքը առնելով ձեռագիր Յայրեաւուրբի մը յիշատակարանէն և Ս. Յարութեան Վերնատան եկեղեցիին պատին վրայ ագուցուած արձանագրութենէն, որ իր ժամանակ գոյութիւն ունէր, բայց այժմ ոչ: Հաննէի պատմութեան համաձայն՝ հետեւեալ կերպով տեղի ունեցած է այս դէպքը. 1439ին Եգիպտացի Մարտիրոս պատրիարքին օրով, Եգիպտացի մեծ վաճառական մը Ղայիպի անուն՝ վաճառականութեան համար Վրաստան կ'երթայ. ան շատ բարեկամ էր Եգիպտոսի սուլթանին. այս պարագան իմանալով Վրաց թագաւորը, ամէն ապօրէն միջոցներով կը սիրաշահի զանիկա և միջնորդ կը բռնէ սուլթանին մօտ, որպէս զի Գողգոթան Հայերէն առնու և տայ Վրացիներուն. Ղայիպի վրացի ծառաներ և աղախիններ իբր ընծայ կը բերէ սուլթանին, հանգերձ բազմագանձ հարստութեամբ, որ մեծապէս կը դիւրադնեն յափշտակութեան գործը. ու այս կերպով միայն Վրացիք կը տիրանան Գողգոթայի: Մարտիրոս Եգիպտացի պատրիարքը կը դիմէ սուլթանին որպէս զի ան ետ առնու այդ հրամանը ու Գողգոթան վերադարձնէ Հայ Միաբանութեան. իր ջանքերը կը յաջողին եւ կրկին հրովարտակ կ'ստանայ, բայց դարձեալ վրացի ոսկիներով կուրացած Ղայիպին կը թեքէ սուլթանին միտքը և կրկին Վրացիք Գողգոթան կը յափշտակեն. ըստ պատմութեան, ձերուռնի պատրիարքը հինգ անգամ Եգիպտոս կը ճամբորդէ արդարութիւն դտնելու համար, բայց ոսկիներուն փայլը և ընչաքաղցութիւնը պաշտօնական անձերը կը հեռացնէին արդարութենէ: Եւ Գողգոթան կը յափշտակուի: Այս խնդրոյն նկատմամբ գոյութիւն ունեցող սուլթանական հրովարտակները ստուգապատում վկաներ են և ճշգրտոյն պատկերացումը կու տան նոյն ժամանակի վարչական և հանրային կեանքին:

Անուշիղ ճանապարհով ստացուած յաղթանակները տեսական չեն կրնար ըլլալ: Վրացիներուն կողմէն Գողգոթայի յափշտակութեան համար ձեռք բերուած վճռագիրը Ս. Երկրին մէջ անոնց համար կը բանայ անկումի և բարոյական խեղճութեան թուական մը: